ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

# ՎԱՀԱԳՆԱՁՈՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016ԹԹ. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ
2013-2016ԹԹ.

Կազմեց Վահագնաձոր համայնքի ղեկավար Էդիկ Եղոյանը

Քննարկվել և հաստատվել է Վահագնաձորի գյուղական համայնքի ավագանու 20 փետրվարի 2013թ. թիվ 02-Ն որոշումով

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է քառամյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի գնահատում
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
3. Առանձին բնագավառներում առաջնահերթ խնդիրների, ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում
5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները՝

Հավելված – 1. *Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը*

Հավելված – 2. *Համայնքային ենթակայության կազմակերպությունների կառուցվածքը*

# Ի՞ՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Քառամյա ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության, առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը: Այն մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ:

## ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ԾԱՌԱՅԵԼՈՒ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ

1. Բնակչության սպասարկման և կոմունալ ծառայությունների բարելավմանը
2. Բնակչության ավելացմանը, բնակչության արտագաղթի պակասեցմանը
3. Նախադպրոցական, դպրոցական կրթության բարեփոխմանը, մշակութային, մարզական դաստիարակությանը
4. Տրանսպորտային սպասարկման բարելավմանը, փողոցների բարեկարգմանը
5. Ընդարձակելու, վերակառուցելու ջրագծի ներքին ցանցն ամբողջությամբ:
6. Համայնքում աղբահանության կազմակերպման և սանիտարահիգենիկ պայմանների ստեղծմանը:
7. Գյուղատնտեսական արտադրանքի ավելացմանը:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա 2013-2016թթ. ծարագրում ներառված են համայնքի հիմնական խնդիրները:

Համայնքային զարգացման քառամյա ծրագիրը հրապարակվում է համայնքի զարգացման ընդհանուր խնդիրների մասին պատկերացում կազմելու, առաջիկա 4 տարում ռեալ ծրագրեր և բյուջե կազմելու, տեղական ինքնակառավարման մարմնի գործողությունները կորդինացնելու համար:

Ծրագրում ներկայացված են հետևյալ փաստաթղթերը.

1. գյուղապետի ուղերձը
2. Համայնքի մասին ընդհանուր տեղեկատվություն
   * պատմական ակնարկ
   * ժողովրդագրություն
   * տեղական ինքնակառավարման մարմիններ
   * մշակույթ
   * բնակարանաշինություն, բնակարանային և կոմունալ տնտեսություն
   * հողօգտագործում, գյուղատնտեսություն, շրջակա միջավայրի պաշտպանություն
   * տնտեսության զարգացում
   * սոցիալական վիճակ
3. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները
4. Առաջնահերթ ծրագրերի կոնկրետ խնդիրների ձևակերպումը ըստ առանձին բնագավառների
5. Բյուջեի ֆինանսական ցուցանիշների վերլուծություն ըստ տարիների (եկամտային և ծախսային)
6. Համայնքային սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների, գույքի առկայությունը
7. Հավելված գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքի մասին
8. Հավելված գյուղապետարանի ենթակա կառույցների մասին

## ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԿԼԻՄԱՆ
## ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Վահագնաձոր համայնքի պատմական ակունքներով Հնագույն բնակավայր է, որը ստեղծվել է « Լոռի հանգստյան տան » տեղամասում, որտեղ նախկինում ֆրանսիացիների կողմից գործել են ոսկու հանքեր:

1800թ. վերջին երկաթգծի կայարանի ստեղծվելուց հետո գյուղը տեղափոխվել է Շահալի կայարան այժմ` գյուղ Վահագնաձոր:

- Համայնքով է հոսում Փամբակ գետը:
- Հեռավորությունը մարզկենտրոնից 15 կմ
- Ծովի մակերևույթի բարձրությունը 1000 մ

## ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի 148 տնտեսություն, գյուղում այժմ կա գրանցված 388 մարդ, որից 35 դպրոցական, 74 թոշակառու, 5 ծնողազուրկ, 241 ընտրող:

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի կողմից աշխատակազմի հետևյալ կազմով`

| | |
|---|---|
| Գյուղապետ | 1 դրույք |
| Գյուղապետի տեղակալ | 1 դրույք |
| Գյուղապետարանի աշխատակազմի ղեկավա | 1 դրույք |
| Գյուղապետարանի առաջատար մասնագետ հաշվապահ | 1 դրույք |

## ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ԵՆ

Մանկապարտեզը, որը չի գործում աշխատողների աշխատավարձի պակասի պատճառով:

Համայնքի սեփականություն հանդիսացող հիմնական միջոցներ

Մանկապարտեզի շենք

նիվա 21214 մակնիշի ավտոմեքենա

համակարգիչ P-4

տպագրական ունիվերսալ սարք:

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա խմելու ջրի ներքին ցանց, որը վերանորոգման կարիք ունի:

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Բնակավայրի հողերն են՝

1. Այլ հողատեսք – 51.17 հա
2. Բնակավայրի հողեր – 10.99 հա
3. Արտադրական նշ. օբյեկտներ – 2.51 հա
4. էներգետիկա, տրանսպորտ և կոմունալ – 0.09 հա
5. Հատուկ պահպանվող տարածք – 2.42 հա
6. Ջրային հողեր – 0.91 հա
7. Դպրոց – 0.07 հա
8. էլ. ենթակայան – 0.055 հա
9. Երկաթգիծ – 12.14 հա
10. Մարզային նշանակության ճանապարհ – 3.99 հա
11. Գետ – 13.47 հա
12. Անտառ – 148.41 հա

Ընդհամենը – 246.225 հա

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Վահագնաձոր համայնքը ոչ մի տեսակ սեփականաշնորհումից չի օգտվել, շատ չնչին մասը զբաղված է անասնապահությամբ:

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Վահագնաձոր համայնքը ունի մեկ հիմնական դպրոց, որը կառուցվել է 2009թ-ին, գտնվում է գերազանց վիճակում, ունի 19 ուսուցիչ, 35 աշակերտ:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղը չունի բուժկետ և ընդանրապես չի էլ ունեցել, գյուղի առողջապահական վիճակը վատ է:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒԼ ԿՈՂՄԵՐԸ

- Արտագնա աշխատանքի մեկնողների թվի մեծացում
- Աշխատատեղերի պակաս
- Անմխիթար վիճակում է համայնի ճանապարհները
- համայնքում մասամբ չկա գազաֆիկացում, գազաֆիկացումից չեն օգտվում համայնքի 80%:
- Համայնքում աղբահանություն չի իրականացվում:

## ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Գյուղի հորդառատ անձրևներից, սողանքներից և սելաֆներից չպաշտպանվելը
- Բնակչության մեծ մասը բացակայում է և չի կատարվում հարկային պարտավորությունները
- Կոյուղու, աղբահանության և սելաֆատարերի բացակայություն:

# ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ԿՈՆԿՐԵՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

## ԾՐԱԳԻՐ 1
## ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԳԱԶԱՏԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

2007թ-ին Վահագնաձոր համայնքը ընդգրկվել է "Իֆադ" ծրագրում, բայց մինչ օրս գյուղը մասամբ է գազաֆիկացվել, համայնքում բնակչության շուրջ 80% գազաֆիկացում չունի, ներքին ցանց բացակայում է: Համայնքում ներքին ցանացը կազմում է մոտավորապես 2500 մ տարածք:

## ԾՐԱԳԻՐ 2
## ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Գերեզմանատան ճանապարհը, որը կազմում է 1500 մ ընդհանրապես շարքից դուրս է եկել, իսկ ասֆալտապատում ընդհանրապես չի եղել: Գյուղը կարիք ունի նաև նոր գերեզմանատան, քանի որ համայնքը չունի հողատարածք, այդ իսկ պատճառով գերեզմանատունը պետք է կառուցվի ինչ որ հողատարածքի բացելով և պատնեշ կառուցելով:

## ԾՐԱԳԻՐ 3
## ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Խմելու ջրի ներքին ցանցը, որը կազմում է 2000մ գտնվում է անմխիթար վիճակում, քանի որ հայրենական մեծ պատերազմից առաջ է կառուցվել: Ներքին ցանցը ամբողջովին պետք է նորոգվի:

## ԾՐԱԳԻՐ 4
## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Համայնքի մանկապարտեզը 2000թ-ից չի գործում, բյուջեի ֆինանսավորման դադարեցման պատճառով:

Համայնքի քարաշեն մանկապարտեզը 2010թ. վերանորոգվել է, ձեռք է բերվել գույք, միայն ունենք աշխատողների աշխատավարձների խնդիր, որը 1 տարվա համար կազմում է 2.653 մլն դրամ:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մի քանի խնդիրներ:

- Դիմել ՀՀ կառավարություն, անհրաժեշտ ֆինանսական աջակցություն ստանալու համար:
- Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի երեխաները կստանան նախադպրոցական լիարժեք կրթություն:
- Ծրագրի իրականացման դեպքում երեխաները կապահովվեն կենցաղի, հանգստի և խաղերի պայմաններով:

- Դիմել ենք <<Վարդանանց ասպետներ>> բարեգործական կազմակերպությանը մնկապարտեզը ֆինանսավորելու նպատակով, սակայն առայժմ պատասխան չենք ստացել:

## ԾՐԱԳԻՐ 5
## ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

Վահագնաձոր համայնքը 1991թ-ից մինչև օրս չունի գյուղապետարանի շենք գրադարան, բուժկետ, ակումբի շենք:

Վահագնաձոր համայնքը 2012թ-ին ՀՀ նախագահի այցի հետ կապված 26.03.2012թ թիվ 21-09 գրությամբ դիմել է ՀՀ Լոռու մարզպետին Վահագնաձոր համայնքի 3 առաջնահերթ խնդիրների մասին

1 կետով նախատեսված էր փոքր համայնքային կենտրոնի կառուցում 36 մլն արժողությամբ որի իրականանալու դեպքում համայնքում միանգամից կլուծվի գյուղապետարանի, գրադարանի, բուժկետի և ակումբի շենքերի հարցերը: